

ըստ Արիստոտէլի ի Գիրս Աշխարհաց, առ Մեծն Աղեքսանդրոս՝ վասն իմաստութեան, թէ իմաստաւորութիւն առեալ զմիտս առաջնորդ անցեալ եղեւ եւ հասեալ առանց աշխատութեան գտեալ ճանապարհ, եւ զյոյովագոյնն ի միմեանց հեռացեալսն տեղեօք տրամախոհութեամբն եբեր ի միասին. գիւրբար կարծեմ թէ զազգակիցսն ճանաչելով եւ աստուածային ակամբ հոգւոյն յաստուածայինսն իրս հասանելով եւ յառաջախօս լինելով մարդկան զայս ինչ իրաց եւ որչափ հնար ինչ էր առ ի յինքենէ ամենեցուն, առատապէս ետ զպատուականագունիցն ցոյցս։ Ոչ պակաս քան զիմաստասիրութեանն արուեստ արարին եւ Լաթինացիք ամենից ազգաց, որք զաշխատութիւն միայնակ եւ զվայելումն հասարակ աւանդեցին։ Որ եթէ եւ նոքա միտս ունին վայելիցեն ի բարիսն այլոց, եւ եթէ աչս ունին՝ տեսցեն եւ եթէ զառողջ ստամոքսս ունին՝ արբցեն եւ եթէ կորուսեալ զիմաստ ի յինքեանց եւ կամ անփոյթ եղեալ զգեղեցկութենէ նորին զինքեանսն ներզգան, գիւտիքն այլոց եւ փութաջանութեամբն հրճուեսցին. որպէս եւ ոմն ի բանասիրաց կանխաւ զայս ոգեաց ասելով, եթէ հրճուին անձինք բանականաց առ ի գիւտ միոյ իրի, որչափ եւ մերս ի գիտութիւն ընդհանուր էակացն։ Արի ժլատագոյն բարս ունի այնպիսին, որ ոչ ունի զիտացէ եւ թէ ունի տալ՝ ոչ կամիցի եւ այլոցն տուեցելոց ոտնահար լինիլ ախորժիցէ եւ ոչ կամիցի զթերութիւն իւր այլոց լիութեամբն լրացուցանել։ Բայց իմ նկատեալ ի փարթամութիւնս Լաթինացւոց եւ յաղքատութիւն ազին իմոյ եւ իմ իսկ գլխովին (ի կողմանէ իմաստութեան եւ մեկնութեան Աստուածաշունչ Գրոց) թաղձէի եւ մորմնքէի ի սրտի իմում, թէ վասն ոյր զհեղգութիւն նախամեծար առնէ ազգն իմ եւ զանուսումնութիւն քան զուսումնաւորութիւն